Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի ՀԿ
ՀՀ, Երևան, 0019, Բաղրամյան պող. 24/2,
Հեռ./Ֆաքս՝ (+374 10) 52 36 04
Էլ. փոստ՝ officeawhhe@awhhe.am
Վեբ կայք՝ http://www.awhhe.am

Armenian Women for Health and Healthy Environment NGO
24/2 Baghramyan Avenue, Yerevan 0019, Armenia
Tel./Fax: (+374 10) 52 36 04
E-mail: officeawhhe@awhhe.am
Website: http://www.awhhe.am

N 1
20 հունվարի 2026թ.

ՀՀ շրջակա միջավայրի նախարար՝
պարոն Համբարձում Մաթևոսյանին

Մեծարգո նախարար,

Տեղեկացնում ենք, որ 2025 թ.-ի դեկտեմբերի 18-ին «Իբիս Երևան Կենտրոն» հյուրանոցի «Երևան» սրահում տեղի ունեցավ ՄԱԿ-ի Ժողովրդավարության հիմնադրամի (UNDEF) ֆինանսավորմամբ «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» (ՀԿՀԱԱՇՄ) ՀԿ-ի կողմից իրականացված ««Հայաստանում ժողովրդավարական մասնակցության և կլիմայական առումով «խելացի» գյուղատնտեսության խթանում»» երկամյա ծրագրի ավարտական միջոցառումը:

Միջոցառմանը մասնակցում էին ՀՀ մի շարք նախարարությունների, ՀՀ Լոռու և Կոտայքի մարզերի համայնքապետարանների ու վարչական ղեկավարների գրասենյակների ներկայացուցիչներ, ֆերմերներ, ՀԿ-ների և այլ կառույցների ներկայացուցիչներ:

Կից Ձեր դիտարկմանն ենք ներկայացնում գյուղատնտեսությունում նորարարական տեխնոլոգիաների ներդրման և կին ֆերմերների դերի բարձրացման վերաբերյալ ՀԿՀԱԱՇՄ ՀԿ-ի մշակած առաջարկությունները, որոնք քննարկման են դրվել վերոհիշյալ միջոցառման ընթացքում և արժանացել մասնակիցների հավանությանը:

Կանխավ հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը համագործակցության համար:

Հարգանքով՝

«Հայ կանայք հանուն առողջության և
առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի նախագահ Ելենա Մանվելյան, բ.գ.թ.